

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ**

Գրիգորյան Վահագն

*մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն
v.grigoryan@ysu.am
<https://orcid.org/0009-0005-2011-2100>*

Ամփոփում

Համառոտ ներածական: Վերջին տասնամյակներում, պայմանավորված հասարակության ներսում փոփոխվող սոցիալական և տնտեսական խնդիրներով, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների կենցաղ մուտք գործելով, փոխվում են նաև հասարակության յուրաքանչյուր անդամի հոգեբանությունը, վարքը: Օնունդ են առնում նոր խնդիրներ երեխաների ու ծնողների, երեխաների ու դպրոցի, դպրոցի ու ծնողների միջև: Այդ առումով մեծանում է դպրոցի և հասարակության համագործակցության դերը: Ժամանակակից դպրոցի առջև ծառացած է համագործակցության և փոխգործակցության նոր ձևեր ու մեթոդներ, որոնք դժվար են ընկալվում թե՛ մանկավարժների, և թե՛ ծնողների կողմից: Արդյունքում փաստվում է, որ գործ ենք ունենում ընտանիքի և մանկավարժական կոլեկտիվի, ծնողների ու երեխաների համագործակցության կազմակերպման նոր պայմանների հետ:

Մանկավարժության պատմության վերջին շրջանում մի շարք ճանաչված մանկավարժներ (Ա. Ն. Բոյկո, Լ. Ի. Նովիկովա, Գ. Ի. Շչուկինա), հոգեբաններ (Ա. Վ. Պետրովսկի, Կ. Ա. Աբուլխանովա-Սլավսկայա, Ե. Վ. Շորոխովա), սոցիոլոգներ (Տ. Ա. Գոտկո, Ռ. Մերտոն, Ն. Ամելգեր) անդրադարձել են այս խնդրին, առաջ են քաշել մոտեցումներ, առաջարկել ծրագրեր ու մոդելներ, որոնք առանձնակի նշանակություն են ունեցել մանկավարժական կոլեկտիվի և ընտանիքի համագործակցության կազմակերպման համար: Հոդվածում հաճախ դիմել ենք նրանց մոտեցումներին ու գաղափարներին: Ուշադրություն է դարձվել ծնողների և երեխաների փոխազդեցության կառավարման մի շարք մոդելների վրա: Մեկնաբանվել են ուսուցիչների, ծնողների ու երեխաների վարքագծերը, ժամանակակից ընտանիքին ցուցաբերվող աջակցության առանձնահատկությունները, մանկավարժական աջակցության բովանդակությունը:

Աշխատանքում տեղ են գտել մանկավարժական կոլեկտիվի ու ծնողների հաղորդակցման ձևերը, դրանց արդյունավետությունն ու դերը:

Հոդվածում առանձնացրել ենք ծնողների ու երեխաների փոխգործակցության հինգ որոշիչ, որոնք հենքային նշանակություն ունեն ժամանակակից ընտանիքի բարոյահոգեբանական, սոցիալ-մշակութային մթնոլորտի ձևավորման ու կայացման գործում:

Առանձնացվել են դպրոցի ու ծնողների համագործակցության և դրա միջոցով ծնողների ու իրենց երեխաների փոխգործակցության կազմակերպման մոտեցումները, որի արդյունքում փոփոխվում են համագործակցության բնույթը, սկզբունքները, որոշակի բաղադրիչները, և վերջնարդյունքում փոփոխվում են փոխգործակցության նպատակները, բովանդակությունը, ձևերն ու տեխնոլոգիաները:

Բանալի բառեր՝ համագործակցություն, փոխգործակցություն, համագործակցության պայման, կառավարման մոդել, փոխվստահության մթնոլորտ, մանկավարժական կուլտուրա, բիհեհորիստական հոգեբանություն, էզոլիճակ, էթնոմանկավարժական մոտեցում:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքերն են.

- գիտամանկավարժական հետազոտությունների կազմակերպման և իրականացման տեսությունները (Ա. Մ. Նովիկով, Գ. Խ. Վալին),
- ընտանիքի գործառնությունների վերաբերյալ սոցիալ-հոգեբանական տեսությունները (Ե. Բ. Գրուզևա, Վ. Յա. Տիտարենկո),
- դպրոցի կառավարման տեսությունը (Տ. Ի. Շամովա, Բ. Ֆ. Լոմով),
- սոցիալական դաստիարակության տեսությունը (Ա. Վ. Մուդրիկ, Վ. Գ. Բոչարովա, Ս. Ի. Գոլոդ),
- համակարգային մոտեցման տեսությունը (Ի. Վ. Բեստուժևա-Լադա, Վ. Ա. Կարակոպսկի, Ա. Վ. Ավերյանով):

Հիմնախնդրի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը:

Տվյալ հետազոտության նպատակն է ներկայացնել մեր հասարակության մեջ ընտանիքի և մանկավարժական կուլեկտիվի համագործակցության կազմակերպման պայմանները և փոխազդեցության կառավարման մոդելները, վերլուծել ծնող-մանկավարժ աշխատանքի բովանդակությունը, փոխգործակցության ձևերը:

Գիտական նորույթը: Տեսական նյութի վերլուծության և գիտամանկավարժական փորձի ընդհանրացման արդյունքում բացահայտվել են ուսուցիչների և ընտանիքի (ծնողների և երեխաների) համագործակցության կազմակերպման ձևերը, փոխգործակցության դրսևորումները, ցուցիչները, ներկայացվել են մանկավարժական պայմանները փոխազդեցության կառավարման մոդելների կիրառման ժամանակակից մոտեցումները:

Հիմնախնդիրներին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Մեր կողմից տեսական արդիական նյութի ուսումնասիրությամբ (Ն. Ի. Դերեկլևա, Ս. Ի. Կովալենկո, Վ. Մ. Լիզինսկի, Լ. Ի. Պետրովա, Ս. Ա. Սմիրնովա) և կրթահաստատություններում (Թիվ 155, 189, 199, 200 դպրոցներ) իրականացված հետազոտությունների ու սոցիոլոգիական հարցումների վերլուծությամբ բացահայտվել են մանկավարժական կուլեկտիվի, ծնողների ու երեխաների համագործակցության մի շարք խնդիրներ, օրինաչափություններ: Հրատարակվել են գիտական հոդվածներ:

Հետազոտության տեսական նշանակությունը: Բացահայտվել և վերլուծվել են մանկավարժների, ծնողների ու երեխաների միջև տեղի ունեցող համագործակցության կազմակերպման պայմանները, ներկայացվել են փոխազդեցության կառավարման մոդելները: Հետազոտության գործնական նշանակությունը: Աշխատանքը կարող է օգտակար լինել մանկավարժների, հատկապես հանրակրթական, այդ թվում օժանդակ կրթահաստատությունների ուսումնադաս-

տիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենների, դասղեկ-դասավարների համար:

Հիմնական նյութի շարադրանքը: XXI դարը վերափոխված արժեքների, տեղեկատվական տեխնոլոգիաների, մարդկային մտքի թռիչքի, հանդուրժողականության, փոխգործակցության դար է: Այդ համատեքստում առաջին պլան են մղվել հասարակության անդամների ինտելեկտի, ինքնուրույնության, ստեղծագործական կարողությունների, արժեքային կոդմոնոքոնիների զարգացման, սոցիալական և մշակութային կապիտալի ձևավորման խնդիրները, որոնցում էական դեր է հատկացվում դպրոցին ու հասարակությանը:

Վերջին շրջանում մանկավարժական գրականության մեջ դպրոցի և ընտանիքի գործընկերության, երկխոսության համագործակցության գաղափարները դարձել են անհրաժեշտ: Մակայն դրանց կիրառումը դպրոցի մանկավարժական պրակտիկայում ընթանում է դժվարությամբ: Մանկավարժները, որպես կանոն, դժվար են վերակառուցում իրենց գործունեությունը, քանի որ չեն տիրապետում սովորողների և նրանց ծնողների հետ երկխոսության և փոխգործակցության մեխանիզմներին: Իրականում չեն պատկերացնում, որ համատեղ գործունեության բովանդակության խորացումը, կրթության որակն ու արդյունավետությունը կարելի է ապահովել միայն համայնքի հետ սերտ համագործակցության, համատեղ ծրագրերի և միջոցառումների իրականացման, սովորողների ծնողների հետ ստեղծագործական հաղորդակցման և նրանց մանկավարժական կուլտուրայի բարձրացման պայմաններում: Այդ փոխգործակցության արդյունավետությունը պահանջում է ուսուցչի որոշակի չափանիշներ՝ հոգևոր-բարոյական կերպար, մասնագիտական հմտություն, դպրոցի և մանկավարժական առաջավոր փորձի վերաբերյալ գիտելիքներ, մանկավարժական կուլտուրա, գործընկերների, սովորողների և նրանց ծնողների հետ համագործակցելու կարողություն:

Երեխայի սոցիալական պաշտպանության նպատակով ընտանիքը միշտ հանդես է գալիս որպես միջնորդ երեխայի և հասարակության միջև: Դպրոցի գործառնություններն այլ են: Նրա խնդիրն է ապահովել անհրաժեշտ պայմաններ երեխաների ուսուցման, ընդունակությունների զարգացման, աշխարհայացքի ձևավորման և դաստիարակության համար՝ նպաստելով նրա սոցիալականացմանը, գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերմանը և արժեքահամակարգի ձևավորմանը: Այսինքն՝ սովորողների նպատակաուղղված դաստիարակության և սոցիալականացման խնդիրը չափազանց սուր է դրված ինչպես դպրոցի, այնպես էլ ընտանիքի առջև, և դա փաստում է այն տեսակետը, որ դպրոցի դաստիարակչական աշխատանքների արդյունավետությունը առանց սովորողի ընտանիքի հետ համագործակցության անհնար է:

Հանրակրթական դպրոցը սոցիալական այն ինստիտուտն է, որով գործնականում անցնում են բոլոր երեխաները, և որում իրականացվում են ընտանիքի հետ համագործակցության մի շարք ձևեր:

Մեր բազմամյա վարչական աշխատանքի փորձը և ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դպրոց-ընտանիք համագործակցության արդյունավետությունը պայմանավորված է փոխգործակցության տեխնոլոգիաներով, դպրոցի կառավարման սուբյեկտների կողմից մանկավարժական կոլեկտիվի վրա կառավարչական ներգործության որակով և փոխգործակցության արդյունավետության վերահսկմամբ:

Այս գործընթացում փոխգործակցության որակական դրսևորումներն ու բնութագրերը մենք դիտարկել և ուսումնասիրել ենք երեխաների ու ծնողների անմիջականորեն առարկայական, որոշակի գործունեության մեջ: Ընդ որում, հաշվի են առնվել այն հանգամանքները, որ նրանց համատեղ գործունեության ենթատեքստից դուրս սուբյեկտների փոխգործակցության քննարկումը ենթադրում է պայմանավորվածություն, բովանդակալից հիմքի բացակայություն [4, էջ 175]:

Դպրոց-ընտանիք համագործակցության, ծնող-երեխա փոխգործակցության արդյունքների որակի ցուցիչներ կարելի է ընդունել սովորողների կրթվածության որակը, ուսուցիչների և դպրոցի ղեկավարության մասնագիտական կոմպետենտությունը, ծնողների հոգեբանամանկավարժական գիտելիքների մակարդակը:

Դասղեկների ժողով-գրույցների, ժողով-պրակտիկումների, սեմինարների ընթացքում հաջողվել է տեղեկանալ ուսուցիչների կարծիքը ծնողների հետ համագործակցության նշանակության մասին: Նրանց հետ անցկացվել են համալիր մեթոդական միջոցառումներ, որոնց արդյունքները շարադրված են ստորև: Այդ արդյունքները քննարկվել են որպես ուսուցիչների իրական հնարավորությունների արտացոլում՝ դասարանական կյանքում ծնողների ու նրանց երեխաների հետ անմիջականորեն համագործակցության մեջ:

Իմանալով ընտանիքի դաստիարակչական ներուժը՝ յուրաքանչյուր դասարանի դասղեկ պետք է օժանդակի ծնողներին՝ հաղթահարելու իրենց երեխաների դեռահասության տարիքի դժվարությունները: Ուսուցիչները և ծնողները քաջատեղյակ պիտի լինեն, որ մանկավարժական փոխգործակցության արդյունքում ծնողների և երեխաների միջև առաջ են գալիս նոր երևույթներ:

Օրինակ՝ դպրոցամուտը, որը բնութագրվում է իբրև ճգնաժամային, հոգեբանական ու կազմաբնախոսական զարգացման նշանակալի շրջան երեխայի կյանքում, նաև մեծագույն իրադարձություն է, ոչ միայն երեխաների, այլև ծնողների համար [8, էջ 54]:

Նոր երևույթներ են նաև դպրոցական ռեժիմին, ընկերների խմբին, ուսուցիչների պահանջներին հարմարվելը:

Ընդհանրապես առաջին դասարանցիները դպրոցին հարմարվելու գործընթացում կրում են ֆիզիոլոգիական և հոգեբանական դժվարություններ: Այդ պատճառով ուսուցիչները ոչ միայն իրենք պետք է իմանան դպրոցականների մտածական գործունեության առանձնահատկությունները, ճանաչեն երեխայի

հուզաշխարհը և նրա նշանակությունը երեխայի զարգացման մեջ, այլև ծնողներին հաղորդեն գիտելիքներ այդ գործընթացների մասին:

Այս առումով մեծ աշխատանք պետք է կատարի դասուցիչը, որի աշխատանքի հիմնական ուղղություններից մեկը դիագնոստիկական է: Ն. Ի. Դերեկլեևան նշում է. «Առանց հոգեբանամանկավարժական դիագնոստիկայի հնարավոր չէ կառուցողական ձևով պլանավորել դաստիարակչական աշխատանքը դասարանական կոլեկտիվում և կարգավորել ծնողների հետ տարվող աշխատանքը» [1, էջ 52]:

Մեր ուսումնասիրության ընթացքում առանձնացվել են մի շարք մանկավարժական պայմաններ, որոնք նպաստում են ուսուցիչների և ծնողների համագործակցության, երեխաների և ծնողների փոխգործակցության արդյունավետության բարձրացմանը: Այդ պայմաններից ենք համարում.

- ուսուցչի մարդասիրական կողմնորոշումը,
- ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնող, ծնող-երեխա համակարգում փոխվստահության մթնոլորտի ապահովումը, համատեղ գործունեության մեջ փոխըմբռնումը,
- համաստեղծագործական-կրթական միջավայրի ստեղծումը,
- ուսուցիչների կոմպետենտությունը,
- մանկավարժական համագործակցության կառուցվածքի մոդելավորումը, մտավոր մանկավարժական խնդիրների առաջադրումը,
- փոխօգնության և փոխադարձ բարյացակամության մթնոլորտի ստեղծումը,
- համամարդկային արժեքների նկատմամբ դրական ներգործությունների կիրառումը,
- քաղաքացիական, մարդասիրական դաստիարակության գաղափարների քարոզումը,
- կողմերի դաստիարակչական ներուժի օբյեկտիվ գնահատումը,
- ժողովրդավարական սկզբունքների զարգացումը փոխհարաբերություններում, առաջացող հիմնախնդիրների արդյունավետ, կառուցողական քննարկումը,
- ընդհանուր համաձայնության ձգտումը դաստիարակչական գործընթացի բոլոր փուլերում,
- կողմերի ներգրավվածությունը ստեղծագործական, դաստիարակչական գործընթացներում,
- մանկավարժական փոխներգործության մեթոդների տիրապետում դասընկերների կողմից,
- ծնողը՝ որպես կայացած ու դաստիարակության չափանիշներ կրող անձ:

Ուսուցիչներն ու դասուցիչը պետք է դեռևս բուհի ուսման տարիներից քաջատեղյակ լինեն սովորողների ծնողների դաստիարակություն հասկացության էությանը, նպատակներին, կարողանան մշակել ծնողների մանկավարժական

լուսավորության, ընտանիքների ուսումնական և մանկավարժական փոխգործակցության ծրագրեր:

Հանրակրթական դպրոցում կրթության բովանդակության բարդացման, սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության անընդհատ ավելացման արդի պայմաններում, դպրոցը և երեխաները զգում են ծնողների մանկավարժական գրագիտության անհրաժեշտությունը: Բազմաթիվ ծնողներ, հատկապես մայրերը, ստիպված սովորում և սովորեցնում են իրենց երեխաներին, որի համար անհրաժեշտ են ոչ միայն առարկայական գիտելիքներ, այլ նաև ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների իմացություն:

Հասունացել է արդեն ընտանիքի դերի և ընտանեկան դաստիարակության որակի, երեխաների սոցիալականացման անհրաժեշտ պայմանների ստեղծման և ծնողների պրոբլեմային իրավիճակներում ծագած մանկավարժական խնդիրների լուծման կարողությունների ձևավորման հիմնախնդիրները:

Ընտանիքի կատարած կարևորագույն գործառույթներից է դաստիարակչական գործառույթը: Դրա իրականացմամբ մեծապես պայմանավորված է թե՛ երեխայի ապագան, թե՛ ընտանիքի ճակատագիրը, թե՛ ամուսինների երջանկությունը [5, էջ 242]:

Ուստի անհրաժեշտ է բարձրացնել ընտանիքի կրթադաստիարակչական գործառույթները որոշակի մանկավարժական պայմանների և ընտանիքի հետ համագործակցության նոր ձևերի ու մեթոդների միջոցով: Այդ գործառույթները պետք է ընդգրկված լինեն դպրոցի աշխատանքային պլանում:

Հարկ է նշել, որ ծնողներին մանկավարժական աջակցության բովանդակությունը պետք է լինի հետևյալը՝

- տեսական պարապմունքներ՝ ծանոթացում ուսուցման սկզբունքներին, մեթոդներին, ձևերին,
- գործնական պարապմունքներ՝ մանկավարժական խնդիրների լուծում, հաղորդակցման ձևեր, էքսկուրսիաների պլանավորում և նախապատրաստման աշխատանքներ:

Ծնողներին դիտելով որպես փոխգործակցության սուբյեկտներից մեկը՝ նշենք, որ նրա հիմնական գծերն են հարուստ կենսափորձը, բազմակողմ անձնային ապրումները, կանխակալ վերաբերմունքը երեխայի հանդեպ: Որպես գործընկերներ կարևորվում են անձի անհատական վարքագիծը, դրդապատճառները, իդեալները, հայացքները, արժեքները և այլն, ինչպես նաև մտածողության և վարքի յուրատեսակ հայեցակարգերը [7, էջ 102]:

Մեր կարծիքով ժամանակակից ընտանիքին ցուցաբերվող մանկավարժական աջակցությունն օժտված է հետևյալ առանձնահատկություններով, որոնցից են՝

- ծնողների տիպաբանության հաշվառումը,
- ծնողների մանկավարժական օգնություն ստանալու և մանկավարժական գիտելիքներ ձեռք բերելու պահանջմունքը,

- ընտանիքում ծնողների երեխաների հետ փոխգործակցության մեջ ծագած հակասությունների բնույթը,
- ընտանիքում դաստիարակության ոճերը:

Վերը նշված առանձնահատկությունների հիման վրա դասդեղների մեթոդափափոխումների կողմից պետք է մշակվի մանկավարժական աջակցության ծրագիր՝ ներառելով այն դպրոցի ծնողների հետ տարվող ընդհանուր աշխատանքային պլանում:

Մանկավարժների կարծիքով ծնողների հետ կրթական տարբեր ծրագրերի իրականացումը ենթադրում է տարբեր տեխնոլոգիաների ու մեթոդների կիրառում՝ խաղային, ճանաչողական: Դրանք են տեսաֆիլմերի, սահիկաշարերի դիտումը, գրականության ընթերցումը և քննարկումը: Մեր կարծիքով այս ծրագրերի իրականացումը ենթադրում է համակարգային և կոմպետենտային մոտեցում: Մեթոդի ընտրությունը պայմանավորված պետք է լինի պարապմունքի թեմայով և ունկնդիրների պատրաստվածության մակարդակով:

Ծնողներին օգնության ցուցաբերման ժամանակակից ձևերը կարելի է պայմանականորեն բաժանել խմբակային խորհրդատվությունների, անհատական խորհուրդների և հոգեթերապիայի: Որպես կանոն, առաջին դեպքում լուծվում են համեմատաբար բարեկեցիկ ընտանիքների հիմնախնդիրները, իսկ անհատական խորհուրդներն օգնում են ավելի բարդ իրավիճակներում, երբ ծնողների կարծիքներն ու ընկալումը խիստ աղավաղված են, անհրաժեշտ է աշխատանք հոգեթերապիայի հետ [6, էջ 124]:

Մեր կողմից առաջարկվող տեխնոլոգիայում՝ ծնողների մանկավարժական պատրաստության ծրագրում, կարևոր տեղ ենք հատկացրել դերային խաղերին: Զվարճանքից գերծ խաղային գործունեության մեջ համագործակցողների հուզականության և երևակայության շնորհիվ անհետանում է տեղ գտած պայմանականությունը: Ստեղծվում է տարբեր իրավիճակներում կենսական վարժությունների, մարզումների կատարման հնարավորություն, որոնցում բացահայտված սխալները զգուշացնում են իրականության մեջ դրանց կրկնության վերաբերյալ: Իհարկե, այն մանկավարժները, որոնք իրենց գործունեությունը կառուցում են խաղաձևի վրա, պետք է օժտված լինեն մանկավարժական դիտարկման հմտություններով, որոշակի մանկավարժական հետևություններ, դիտարկումներ կատարելու և այդ բոլորն իրենց աշխատանքում օգտագործելու կարողություններով:

Ուսուցիչ-սովորող-ծնող փոխգործակցության տրամաբանությունը իրական մանկավարժական գործընթացում ենթադրում է հակադարձ կապի ապահովում և տեղեկատվության փոխանակում: Այս գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժի կոմպետենտության և հաղորդակցման մշակույթի բարձր մակարդակով: Դրա կառավարման արդյունավետությունը պայմանավորված է որոշակի մոտեցումներով:

Ընդհանրապես դպրոցի կառավարման տեսության մեջ գերակա են մանկավարժական գործընթացի կառավարման համակարգային, իրավիճակային

ու գործունային մոտեցումները: Մակայն ելնելով կրթության յուրաքանչյուր օղակի համակարգային բնույթից՝ ներկայումս առավել կարևոր է կոմպետեն-տային մոտեցումը:

Այդ մոտեցումների հիման վրա կառուցված են տարբեր հետազոտողների կողմից մշակված ծնողների և երեխաների փոխազդեցության կառավարման մի շարք մոդելներ, որոնցից են Ա. Ադլերի, Մայերի, Թ. Գորդոնի, Ջ. Ջոնսոնի կող-մից մշակված տարբեր մոդելները: Ծնողների և երեխաների փոխգործակցու-թյան կառավարման համատեքստում դիտարկենք դաստիարակության մի քա-նի մոդելներ:

Ադլերյան մոդել: Այս մոդելի մեթոդաբանական հիմքը անձի սոցիալական էությունն է: Այն, որ մարդը բնությամբ սոցիալական էակ է, և նրա վարքը դրսևորվում է սոցիալական դրդապատճառներով:

Ա. Ադլերի մոդելի խնդիրներն են՝ օգնել ծնողներին հասկանալ իրենց երե-խաներին, խորացնել երեխայի դաստիարակության իր մեթոդները նրա՝ որպես անձի հետագա զարգացման նպատակով:

Ըստ մոդելի սկզբունքների՝ ընտանիքը կազմակերպություն է, որի գործու-նեությունը կառուցվում է նրա յուրաքանչյուր անդամի կողմից իր խնդիրների ու սահմանափակումների գիտակցման վրա: Ընտանիքի անդամները համա-տեղ ուժերով պետք է ստեղծեն փոխադարձ ջերմ հարաբերություններ միայն իրավահավասարության պայմաններում: Ծնողները պետք է խուսափեն երե-խաների հետ կոնֆլիկտներից, փորձեն նրանց հետ հարաբերություններում հանդես գալ խորհրդատուի և ղեկավարի դերում:

Հիմնական հասկացություններն են՝ «հավասարություն», «համագործակ-ցություն», «բնական արդյունքներ»:

Այդ մոդելին համապատասխան ծնողների դաստիարակության խնդիրնե-րը՝ կապված են ծնողների՝ իրենց մանկավարժական գիտելիքների խորացման հետ: Ադլերյան մոդելի երկու հիմնական խնդիրները պարզեցված ունեն հետ-կյալ տեսքը՝ օգնել ծնողներին հասկանալ երեխաների մտածելակերպը և արարքների դրդապատճառներն ու նշանակությունը, ապրումակցել նրանց: Անհրաժեշտ է օգնել ծնողներից յուրաքանչյուրին զարգացնելու երեխայի դաս-տիարակության սեփական մեթոդները՝ նրա հետագա զարգացման նպատա-կով:

Գործելով այդ ուղղություններում՝ դաստիարակության ադլերյան տեսու-թյունը ձգտում է նախադրյալներ ստեղծել ծնողների և երեխաների արդյունա-վետ փոխգործակցության համար:

Ուսումնատնտեսական մոդել: Սա երեխայի ձևափոխումն է, վարքի կառա-վարումը: Դրա արմատները հասնում են ուսուցման բիհեվիորիստական հոգե-բանություն և թերապիա: Ըստ Սուլցերի և Մայերի՝ բիհեվիորիստական մոտե-ցումը կենտրոնացված է վարքային արձագանքների դիտարկման ու չափման ենթարկվող վերլուծության վրա, և վարքը հասկացվում է որպես դիտարկվող

արտաքին արձագանք: Մոդելում հիմնական շեշտը դրվում է երեխայի վարքի տեխնիկայի և տարբեր եղանակներով դրա ձևավորման վրա:

Թ. Գորդոնի մոդելում, որն անվանվում է նաև զգայական հաղորդակցության մոդել, մեծ տեղ է հատկացվում ծնողների կողմից երեք հիմնական կարողությունների յուրացմանը: Դրանք են՝

- ակտիվորեն լսել, այսինքն՝ լսելու կարողություն, թե երեխան ինչ է ասում ծնողներին,
- երեխայի գիտակցությանը հասցնել սեփական բառերը, այսինքն՝ սեփական զգացումները երեխայի ըմբռնման համար մատչելի արտահայտվելու կարողությունը,
- օգտագործել «երկուսն էլ ճիշտ են» սկզբունքը վիճելի հարցերի լուծման ժամանակ, այսինքն՝ երեխայի հետ այնպես խոսելու կարողություն, որ գրույցի արդյունքից գոհ լինեն երկու մասնակիցներն էլ [9, էջ 108]:

Տրանսակցիոն վերլուծության վրա հիմնված մոդել: «Տրանսակցիան» դիտվում է որպես ծնողի և երեխայի էգովիճակների փոխգործակցություն: «Ծնող» էգովիճակը սովորաբար դրսևորվում և իրականացվում է վերահսկողության, արգելքների, մեծացված պահանջների, պատժամիջոցների, հոգատարության և այլ միջոցներով: «Երեխա» էգովիճակի հիմքում շարժման, ակտիվության, ուրախության, երևակայության, բորբոքվածության ու անկաշկանդության հակումն է: Այս վերլուծությամբ սահմանվում է վերոհիշյալ վիճակների բովանդակությունը: Ծնողների հետ տրանսակցիոն խաղերի հաջորդ շարքը օգնում է սեփական էգովիճակի կրիտիկական գիտակցմանը, անմիջականության, մտերմության, անկեղծության ընկալմանը ներընտանեկան փոխգործակցության մեջ:

Տրանսակցիոն վերլուծության վրա հիմնված մոդելում մշտապես ընդգծվում է, որ երեխայի վարքի փոփոխման բանալին ընկած է երեխայի ու ծնողների դերային սպասումների և հարաբերությունների փոփոխության հիմքում և նման որակական փոփոխության արդյունքները երկար սպասեցնել չեն տալիս:

Վերը դիտարկված մոդելները կողմնորոշված են ընտանեկան դաստիարակության տարբեր մեթոդների, տեխնոլոգիաների և ձևերի կիրառմանը:

Մեր ուսումնասիրություններն ու մանկավարժական գործունեության բազմամյա փորձը ցույց է տալիս, որ արդի դպրոցի կարևոր խնդիրներից մեկը պետք է դառնա ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ, ուսուցիչ-ծնող, ծնող-երեխա համակարգերում դերերի վերախմաստավորումը, իսկ դրա հետ մեկտեղ՝ նաև սովորողների դաստիարակության գործընթացի նկատմամբ պատասխանատվության վերաբաշխումը ծնողների և դպրոցի մանկավարժական կոլեկտիվի միջև: Այսինքն, դպրոցը պետք է դառնա այն հաստատությունը, որտեղ ընտանիքները գտնում են ցանկացած հուզող հարցի պատասխանը և իրենց զգում են կառավարման ենթահամակարգի լիիրավ անդամ: Այստեղ ևս մեծ դեր է խաղում ուսուցչի՝ ընտանիքի հետ շփվելու կարողությունը, մանկավարժական գիտելիքները և մանկավարժական ղեկավարման փորձը, իմիջը:

Ուսուցչի մասնագիտական գործունեության համար, ուսուցչի և ծնողների փոխհաղորդակցման մեջ էական նշանակություն ունեն ուսուցչի մանկավարժական վարպետությունը, հաղորդակցման մշակույթը, մանկավարժական տեխնիկայի տիրապետման անհրաժեշտությունը, ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման մանկավարժական կարողությունները, որոնք պետք է ձևավորվեն բուհում, որը պահանջում է հատուկ աշխատանք՝ ինտեգրելով տեսական և կիրառական հոգեբանության, գործնական մանկավարժության փորձը [2, էջ 22]:

Մանկավարժական հաղորդակցումը մենք դիտարկում ենք որպես ուսուցիչների, երեխաների և նրանց ծնողների փոխգործակցության ձև: Մանկավարժական փոխգործակցության համագիտական տեխնոլոգիան մանկավարժական հաղորդակցումը դիտարկում է որպես սովորողի անձի կառավարման պայման և միջոց:

Հոգեբանների (Ա. Ա. Բոդայլով, Յա. Լ. Կոլումինսկի, Ե. Վ. Շորոխովա, Կ. Ա. Աբուլխանովա-Սլավսկայա) մեծ մասը հաղորդակցումը դիտարկում է որպես գործունեության տեսակ: Սակայն ճանաչված հոգեբան Բ. Ֆ. Լոմովի կարծիքով միջանձնային հաղորդակցման մեջ կան այնպիսի տեսանկյուններ, որոնք չեն կարող գործունեություն համարվել [10, էջ 245]: Միջանձնային հաղորդակցումը՝ որպես առավելապես տեղեկատվության փոխանցման գործընթաց, փաստված է նշաններով և ենթադրում է մարդկանց կողմից միմյանց հասկանալը: Ի տարբերություն հաղորդակցման՝ մարդկանց փոխգործակցությունը կարող է դրսևորվել հատուկ ձեռքսեղմումով, որը, բնականաբար, պարունակում է նվագագույն տեղեկատվություն, բայց համարվում է սոցիալապես կազմակերպված գործընթաց [10, էջ 267]:

Այս սահմանումների համատեքստում մենք կարծում ենք, որ դպրոցի կառավարման սուբյեկտների, աշակերտների և նրանց ծնողների միջև հաղորդակցումը, որի ընթացքում լուծվում են կառավարչական, ուսումնական, դաստիարակչական և անձը զարգացնող խնդիրներ, կոչվում են մանկավարժական հաղորդակցում, որում հստակորեն դրսևորվում են հաղորդակցման մասնակիցների դերային դիրքորոշումները, արտացոլելով նրանցից յուրաքանչյուրի չափանիշային կարգավիճակը:

Ելնելով վերոբերյալից՝ կարելի է փաստել, որ ուսուցչի և ընտանիքի համագործակցությունը՝ որպես մանկավարժական հաղորդակցման տեսակ, ոչ միայն պետք է սահմանափակվի տեղեկատվության ապահովումով, այլև երկխոսության, հաղորդակցման միջոցով ծնողների մանկավարժական գիտելիքների հարստացմամբ, մանկավարժական խնդիրների լուծման կարողությունների զարգացմամբ, փոխգործակցության որոշակի կանոնների և չափանիշների ուսուցմամբ, ծնողների հոգեբանական օգնության ցուցաբերմամբ: Դպրոցի ուսուցիչը պետք է լինի հաղորդակցման մշակույթի կրողը:

Դաստիարակության գործընթացում, մասնագիտական պարտականություն է համարվում ծնողների միջոցով սովորողների հոգեբանական և մանկա-

վարժական աջակցության ցուցաբերումը, հատկապես՝ աշակերտների ու նրանց ծնողների պահանջմունքների, հետաքրքրությունների բավարարման նկատմամբ ուշադրությունը:

Համագործակցման արդյունավետ մոդելը նոր պահանջներ է ներկայացնում մանկավարժի մասնագիտական պատրաստությանը և ակնառու է, որ ծնողների հետ աշխատանքի իրականացման և մանկավարժական համագործակցության կարողությունները պետք է ձևավորվեն բուհում, որը պահանջում է հատուկ աշխատանք՝ միասնացնելով տեսական և կիրառական հոգեբանության, գործնական մանկավարժության փորձը:

Մանկավարժական փորձի վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնել ծնողների և երեխաների փոխգործակցության հինգ որոշիչ՝ ծնողների անձի առանձնահատկություններ, երեխայի անձնային և կլինիկա-հոգեբանական առանձնահատկություններ, սոցիալ-մշակութային և ընտանեկան ավանդույթներ, «բնավորության գործոն», որը կապված է մոր հետ երեխայի վաղ շփումների հետ, ընտանիքի չափահաս անդամների շփման առանձնահատկություններ [3, էջ 106]:

Ծնողների ու նրանց երեխաների փոխգործակցության վրա հոգեբանական և մանկավարժական ներգործության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ուսուցիչների, ծնողների և երեխաների հարաբերությունների կարգավորմամբ և դրա զարգացնող ներգործությամբ: Մեր կարծիքով ժամանակակից դպրոցի զարգացման անառարկելի պայման է համարվում մանկավարժական կոլեկտիվի համագործակցությունը ծնողների և երեխաների հետ:

Ձեռնամուխ լինելով դպրոցի և համայնքի գործընկերության, փոխգործակցության արդյունավետ մոդելի մշակմանը՝ մենք հենվել ենք Տ. Ի. Շամովայի, Պ. Ի. Տրետյակովի, հոգեբաններ Բ. Ֆ. Լոմովի, Օ. Վ. Սոլովևայի, Վ. Մ. Պոգալշայի, Ն. Պ. Կապուստինի, Ն. Ի. Դերեկլենայի, Ա. Վ. Մուդրիկի և այլոց մանկավարժական մոտեցումներին: Կ. Ի. Շամովան դպրոցի և ընտանիքի համագործակցության կարևորագույն պայման է համարում ծնողներին խրախուսելը [11, էջ 254]:

Գիտահետազոտական գրականության տեսական վերլուծությունը, փորձառարական դպրոցների, համայնքի հետազոտվող աշխատանքների փորձի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այս հիմնախնդիրն արդիական է և ոչ լիարժեք ուսումնասիրված, ինչպես նաև հնարավորություն է տվել սահմանելու հիմնական մոտեցումները, հայեցակարգային դրույթները, գաղափարները, որոնք կազմում են փորձառարական աշխատանքների կազմակերպման մեթոդաբանական հիմքը:

Մեր կողմից առանձնացվել են դպրոցի և համայնքի համագործակցության և դրա միջոցով ծնողների ու նրանց երեխաների փոխգործակցության արդյունավետության կազմակերպման հետևյալ մոտեցումները՝

- մարդասիրական մոտեցումը, որը ենթադրում է կողմնորոշումը դեպի երեխայի անձի զարգացումը, նրա՝ որպես բարձրագույն արժեքի ընդունումը,

- մշակութաբանական մոտեցումը, որը ենթադրում է ընդհանուր մշակութային, հոգեբանամանկավարժական գիտելիքների միավորումը ամբողջական հոգեբանական, մանկավարժական և կառավարչական գործընթացում,
- էթնոմանկավարժական մոտեցումը, որը հաշվի է առնում ազգային և ընտանեկան ավանդույթները, ժողովրդական մանկավարժության արժեքները երեխայի՝ որպես որոշակի էթնոսի ներկայացուցչի դաստիարակության մեջ,
- անձնակողմնորոշիչ մոտեցումը թույլ է տալիս ապահովել երեխայի բարեկրթությունը, օգնում է երեխային գտնել իր սխալները և համբերատար ձևով, համատեղ շտկել դրանք՝ ձևավորելով երեխայի դրական ինքնագնահատականը:

Նշված մոտեցումների հիման վրա անցկացվել է դպրոցի և ընտանիքի փոխգործակցության համակարգի հետահայաց վերլուծություն, ինչի արդյունքում տարբերակված սկզբունքի վրա մշտապես փոփոխվում էին համագործակցության և փոխգործակցության բնույթը, սկզբունքները, կառուցվածքային, գործառութային բաղադրիչները և, որպես հետևանք, փոփոխվում են փոխգործակցության նպատակները, ուղղվածությունը, բովանդակությունը, ձևերն ու տեխնոլոգիաները:

CONDITIONS OF ORGANIZING INTERACTION BETWEEN THE TEACHING STAFF AND THE FAMILY AND MODELS OF INTERACTION MANAGEMENT

Grigoryan Vahagn

*PhD of Pedagogy, Associate Professor,
Yerevan State University
Republic of Armenia
v.grigoryan@ysu.am*

Summary

Over the past decades, due to changes in social and economic conditions in society, as well as the introduction of new technologies into everyday life, the psychology and behavior of each member of society have changed. New problems arise between children and parents, children and school, school and parents. In this regard, the role of cooperation between school and society increases. The modern school is faced with new forms and methods of cooperation and interaction, which are difficult for both teachers and parents to perceive. As a result, it becomes obvious that we are dealing with new conditions for organizing interaction between the family and the teaching staff, parents and children.

In the modern history of pedagogy, a number of well-known teachers, psychologists, and sociologists addressed this problem, put forward approaches, offered programs and models that were of particular importance in organizing interaction between the teaching staff and the family. We often referred to their approaches and ideas in the article. Attention was paid to a number of models of managing interaction between parents and children. The behavior of teachers, parents and children, the specifics of support provided to a modern family, and the content of pedagogical support are commented on.

The work examines the forms of communication between the teaching staff and parents, their effectiveness and role as a modern process.

In the article, we identified five determinants of parent-child interaction that are of fundamental importance in the formation and development of the moral, psychological, socio-cultural atmosphere of a modern family.

Approaches to organizing school-parent cooperation and, through it, interaction between parents and children are defined, as a result of which the nature, principles and individual components of cooperation change, and ultimately the goals, content, forms and technologies of interaction change.

Keywords: *cooperation, interaction, cooperation condition, management model, atmosphere of mutual trust, pedagogical culture, behavioral psychology, ego state, ethnopedagogical approach.*

УСЛОВИЯ ОРГАНИЗАЦИИ СОТРУДНИЧЕСТВА ПЕДАГОГИЧЕСКОГО КОЛЛЕКТИВА И СЕМЬИ И МОДЕЛИ УПРАВЛЕНИЯ ИХ ВЗАИМОДЕЙСТВИЯ

Григорян Ваагн

*Кандидат педагогических наук, доцент,
Ереванский государственный университет,
Республика Армения
v.grigoryan@ysu.am*

Аннотация

За последние десятилетия в связи с изменением социальных и экономических условий в обществе, а также с внедрением новых технологий в повседневную жизнь изменились психология и поведение каждого члена общества. Возникают новые проблемы между детьми и родителями, детьми и школой, школой и родителями. В этой связи возрастает роль сотрудничества школы и общества. Современная школа сталкивается с новыми формами и методами сотрудничества и взаимодействия, которые сложно воспринимаются как педагогами, так и родителями. В результате становится очевидным, что мы имеем дело с новыми условиями организации взаимодействия семьи и педагогического коллектива, родителей и детей.

В новейшей истории педагогики к этой проблеме обращался ряд известных педагогов, психологов, социологов, которые выдвигали новые подходы, предлагали программы и модели для организации взаимодействия педагогического коллектива и семьи. Мы часто ссылались в статье на работы этих ученых. Мы рассмотрели ряд моделей управления взаимодействием родителей и детей, прокомментировали поведение педагогов, родителей и детей, проанализировали специфику и содержание педагогической поддержки, оказываемой современной семье. В работе рассматриваются формы общения педагогического коллектива с родителями, их эффективность и их роль как двигателя современного процесса.

В статье нами выделены пять детерминант детско-родительского взаимодействия, имеющих основополагающее значение в формировании и становлении нравственно-психологической, социокультурной атмосферы современной семьи.

Определены подходы к организации школьно-родительского сотрудничества и через него взаимодействия родителей с детьми, в результате чего мы предполагаем, что изменятся характер, принципы и отдельные компоненты сотрудничества, а в конечном итоге и цели, содержание, формы и технологии взаимодействия.

Ключевые слова: *сотрудничество, взаимодействие, состояние сотрудничества, модель управления, атмосфера взаимного доверия, педагогическая культура, поведенческая психология, эго-состояние, этнопедагогический подход.*

Օգտագործված գրականություն ցանկ

1. Grigoryan V.V., Mankavarjakan kolektivi ev hamaynqi hamagortcakcutyan kazmakerpman dzevery dprocum: Atenakhosuthyun, Yerevan, 2012, 159 ej:

2. Grigoryan V.V., Mankavarjneri ev tcnoghneri hamagorcacuthyan kazmakerpman tekhnologian: Mankavarjuthyun, KAI, h. 5, 2013 th., ej. 18-23:
3. Grigoryan V.V., Tcnoghneri ev erexaneri pokhgorcaccuthyuny vorpes hoguebanamankavarjakan himnakhndir, «Mkhitar Gosh» gitametodakan handes, N 1-2, Yerevan, 2005 th., ej. 103-107:
4. Grigoryan V.V., Dproci ev tcnoghakan hamaynqi pokhgorcaccuthyan karavarman methodnery, Mankavarjakan mitk, N 1-2, Tatev gitakrthakan hamalir, Yerevan, 2007 th., ej 175-182:
5. Grigoryan V.V., Zhamanakakits yntaniqi social-mankavarjakan nerujy, Kantheqh, Asoghik hrat., N 2, Tathev gitakrthakan hamalir, Yerevan, 2005 th., ej 238-242:
6. Grigoryan V.V., Tcnogh ev yerekha mankavarjakan nergortcuthyan himnakan ughghuthyunneri, «Hayoc lezu ev grakanuthyun» amsagir, N 1-2, Yerevan, 2005 th., ej 121-125:
7. Grigoryan V.V., Tcnoghneri ev yerekhaneri pokhgortcaccuthyan harceri shurj, «Krtuthyuny 21-rd darum», 2(10), 2023 th., ej 97-107:
8. Karapetyan A.S. ev urishner, Dproci karavarman tesuthyuny ev praktikan, Yerevan, KBK, 2001 th., 144 ej:
9. Golod S.I., Stabil'nost' semyi: sotsiologicheskii demograficheskii aspekt: dis. dokt. filosof. nauk: Leningrad, 1986, 321 s:
10. Lomov B.F., Metodologicheskie i teoreticheskie problemy psikhologii, Moskva, Direkt-Media, 2008, 1174 s:
11. Shamova T.I. i drugie, Upravlenie obrazovatel'nymi sistemami, 2-e izd., Moskva, Akademiya, 2005, 382 s. THE FAMILY AND MODELS OF INTERACTION MANAGEMENT

Получено: 27.03.2025

Рассмотрено: 01.04.2025

Принято: 25.04.2025

Received: 27.03.2025

Reviewed: 01.04.2025

Accepted: 25.04.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License